

## ԹԱՐԳՄԱՆՉԱՑԻ 70 ԱՄԵԱԿ ՍԻՏՆԻԻ ՄԷՋ

Սիհւոքի ամբողջ տարածքին, մեր Ազգային Վարժարաններու ուկեայ նշանարանը եղած է տալ մատղաշ սերունդին հայեցի դաստիարակուրին եւ նոր սերունդը կապել հայրենի իրականութեան հետ։ Այսօր Ս. Թ. Վարժարանը իր բոյոր տնօրիններով եւ ուսուցչական կազմով իրենց հիմնադրութեան օրէն սկսեալ կը շարունակեն մեծ նուիրումով եւ գոհարելութեամբ առաջ տանիլ այս սրբազն գործը փոխանցելու մեր գալիք սերունդներուն։ ԶԴ Հոկտեմբեր 1999, 70-ամեակի այս բացառիկ հանդիսութեան, սաղիմահայ Ս. Թ. Վարժարանի սան-սանունիհները հաւաքուած էին "Haggys' Cafe" ճաշարանը, որուն սեփականատէր՝ Ս. Թ. Վարժարանի սաներէն, Տէր եւ Տիկին Յարութիւն Փէօրօղլանեանները, այդ օրը ճաշարանը տրամադրած էին 70-ամեակի հանդիսութեան։ Այս հանելի մբնուրտին մէջ եւ առատ սեղաններու շուրջ, կարծես Ս. Թ. Վարժարանի շունչը եւ ոդին կը բուրէր։ Ս. Թ. Վարժարանի սան-սանունիհներէն մեծամասնութիւնը ներկայ էր այս ճաշկերոյք հաւաքին, այնտեղ էին վարժարանի սաներէն Վարուժան Խոհեմուկեամ։ Լ. Հայկ Մշտական ներկայացուցիչը Աւստրալիոյ մէջ, Հայկ Լէփէնեան՝ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ատենապետ, Կարօ Սէրեան՝ Հայ Առաքելական եկեղեցւոյ վարչութեան Ատենապետ, Արլվա Աղապէկեան՝ Հ. Բ. Ը. ի շարաբօրեայ վարժարանի տնօրինուիի, Լէտոն Շէհմէլեան՝ նախկին երկարամեայ Ատենապետ Աւստրալիոյ ՀՀկերակցութեան, եւ ուրիշներ։

Մուտքին մօտ, յանձնախումբի անդամները կը դիմաւորէին սան-սանունիհները եւ անոնց վզին կ'անցնէին Թարգմանչաց Վարժարանի մանկարպարտէզի դպրոցական համագետատի կլորածեւ սպիտակ օժինները։ Այդ օժիններուն տակ քաֆնուած էր Թարգմանչաց Վարժարանի ուսուցչական կազմի անուններէն մին, որպէս բախտառը անուն քաշուելիի վիճակահանութեան, իսկ մուտքի աստիճաններու պատերը զարդարուած էին Թարգմանչաց Վարժարանի շրջանաւարտներու խմբանկարներով։

Բացման խօսքով, հանդէս եկաւ Կարօ Սէրեան, որ մէկ վայրկեան լուսութեամբ, ներկաները յուննկայս յարգեցին յիշատակը Հ. Հ. Խորհրդարանի գոհուածներուն, ապա ան իր խօսքին մէջ տուալ գնահատականը Ս. Թ. Վարժարանի, իսկս կարեւորելով անոր դերը սփիւրքահայ իրականութեան մէջ։

Օրուան հանդիսավարն էր ժագ Մարգարեանը, որ իր կատակներով եւ իին յուշերով խանդավառեց ներկաները, որոնք միասնարար սկսան երգել, դպրոցական երգեր։ Ճաշերու ճոխ եիրա սիրութենէն ետք կեւոն Շէհմէլեան խօսք առնելով, տուալ պատմակամը Ս. Թ. Վարժարանի 1833էն սկսեալ հասնելով մինչեւ մեր օրերը, նշելով իրաքանչիւր շրջանին կարեւորութիւնը իր հիմնադիրներով եւ տնօրիններով։ Ապա խօսք առաւ Հայկ Լէփէնեան ըսելով՝ «Բախտառը է սաղիմահայուրիւնը, որ իր ծոցին մէջ ունի զոյդ դպրոցներ, եկեղեցներ, ակումբներ, Պատրիարքարան եւ մատենադարան, որոնք ազգապահան-

ման ազդակներ են: Սփիւռքի մեր ժողովուրդը, տարու տարի կը նահանջէ, կը ճուլուի բամիւ եւ գործով, ան պէտք ունի նուիրեալ մշակներու, առաջքը առնելու համար վերջնական ճուլումին»: Ան իր խօսիքն վերջաւորութեան ըսաւ. «Մենք բարձրօրէն կը գնահատենք Ս. Թ. Վարժարանի 70-ամեակը, կ'ողջունենք Թարգմանչաց դպրոցի գիր ու գրականութեան նուիրեալները ու կը մաղթենք 70-ամեայ Թարգմանչացին իր ազգանուէր եւ կրթական ծրագիրներուն կատարեալ յաջողութիւն, անհատնում ուժ եւ մշտանորոգ եռանդ: Փառք ու պատիւ Ս. Թ. Վարժարանի հիմնադիրներուն եւ հանգիստ անոնցմէ մահացածներու անհիններուն: Թարգմանչացի ջակը միշտ վառ մնայ մեր հոգիներուն մէջ»:

Ապա կարդացուեցաւ շնորհաւորագիրեր ուղարկուած թեմիս Առաջնորդ Գեր. Տէր Աղան Արք. Պալիօզեանէն, Ս. Թ. Վարժարանի Տեսուչ Հայր Թէոդորոս Զաքարեանէն եւ Վարժարանի օգնական Տեսուչ Տիար Եղիա Տիգրանեանէն: Վերջաւորութեան խօսք տրուեցաւ

Վարուժան Խակէնտէրեանին, որ գեղեցիկ եւ հետաքրքրական ճեւով պատմեց իր մանկական յուշերը դպրոցէն ներս եւ ցաւով արտայայտուեցաւ, որ արար-հրեայ պատերազմին պատճառով ընդհատուեցաւ իր ուսումը, քայց այսօր բախտաւորութիւն է ինձ համար, ըսաւ ան, որ մեր մէջ կը գտնուիմ: Խսկ ԼՂՀ նախագահին կողմէ մշտական ներկայացուցիչ Եշանակուելուն առիթով ըսաւ. «Առաջարկը եկաւ Ղարաբաղի պետականութենէն եւ ժողովուրդէն որմէ յետոյ այստեղի յանձնարարականով պաշտօնս հաստատուեցաւ: Ես ծառայութեամբ պիտի տանիմ այս կարեւոր դերը ի նպաստ մեր հայրենիին»: Վերջաւորութեան իւրաքանչչիւր սան-սանուեհի ներու վկայագիր յանձնուեցաւ Ս. Թ. Վ. ի 70-ամեայ յորելեանի հաւաքոյրին մասնակցելուն համար: Եղան նուիրատութիւններ, հաւաքուեցաւ 3500 տողար, որ պիտի ուղարկուեցաւ նրուսաղէմ՝ Ս. Թ. Վարժարանին:

Վարժեք կատար յանձնախումբի անդամներուն:

ՄԻՈՆԻ

Թղթակից